

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ՆԱԽԱԿՆԵՐԻՑ

Անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանը նամակագրություն է ունեցել բանասեր և մանկավարժ Երվանդ Շահադիդի և Հովհաննես Թումանյանի հետ: Նամակներում արտացոլված են Աճառյանի գործունեության և կյանքի դրվագները, ժամանակի անբարենպաստ պայմանների հետևանքով ստեղծված նրա անապահով վիճակը:

Նամակները պահվում են Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (Ե. Շահադիդի ֆոնդ, ք. III, № 41—43 և 2. Թումանյանի ֆոնդ, № 491—495):

Վ. Գ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

1

18 հունիսի 1905,
Թավրիդ

< Երվանդ Շահադիդին >

Մեծարգո պարոն,

Ձունենալով մի ծանոթ կամ մի բարեկամ Նոր Նախիջևանում, պատիվ ունեմ դիմել Ձեր մեծապալծառությանը, խնդրելով, որ բարեհաճեք հալոսնել ինձ երկտողով, թե առդյոք տեղական թեմական դպրոցում կա՞ն տրամադրելի դասեր հայերենից կամ մատենագրությունից, որոնց համար կարելի լիներ խնդրամատուց լինել:

Կանխապես շնորհակալ լինելով Ձեզ, խնդրեմ ընդունեք խորին հարգանացս հավաստիքը:

Մնամ հարգանքով սպասելով Ձեր շուտափուլ պատասխանին

Հրաչյա Ա. Աճառյան

Հասցես՝ Թավրիդ, Արամյան վարժարան:

2

10 հուլիսի 1907,
Ալեքսանդրապոլ

Մեծապատիվ պ. Ե. Շահադիդ,
Տեսուչ քեմ. դպրոցի Ն. Նախիջևան

Էջմիածնից անցնելու ժամանակ հալո շուտիկ վարդապետից իմացա, թե թեմական դպրոցիդ հայոց լեզվի ուսուցչության համար սրոնում եք հարմարավոր անձ և թե այս առթիվ դիմում եք արել նախկին Եղնիկ. վարդ. Գյանջեղյանին: Մտածելով թե անշուշտ թեմականի հայոց լեզվի դասերի թիվը այնքան շատ կլինի, որ մի մարդ չի կարող վերցնել այդ բոլոր դասերը և որովհետև ինձ հանձնված դասերի թիվը 15 կամ 18, այնքան էլ շատ չէ, ուստի պատիվ համարեցի ինձ դիմել պատ. տեսչությանդ, խնդրելու համար, որ եթե պատշաճ համարեք մի քանի լրացուցիչ դասեր հայոց լեզվից հանձնեք ինձ, ալնսլես, որ իմ դասերի գումարը լինեմ ոչ ավելի քան 24:

Խոնարհ հարգանքով Հ. Ա. Աճառյան

3

3 օգոստոսի 1907,
Շուշի

Մեծապատիվ պարոն,

Ե. Շահազիզ. տեսուչ քեմ. դպրոցին Ն. Նախիջևանի.

Ձեր վերջին հեռագրով պատվիրած էիք սպասել տունձին նամակի: Մի քանի օր նոր Բայազետում սպասելուց հետո ևս ստիպված էի դնալ Բաթում, որտեղից և այժմ եկել եմ Շուշի: Նոր Բայազետից մեկնածս ժամանակ, մասնավոր հաշտարարութեամբ պահանջեցի փոստային վարությունից, որ իմ անունով եկած նամակները Շուշի փոխադրեն: Եվ ահա Ձեր վերջին հեռագրից մինչև այսօր անցել է մի ամիս և ես դեռ չեմ ստացել Ձեր խոստացած նամակը: Որովհետև տեղյակ չեմ նոր Նախիջևանի թեմականի տեղական հանգամանքներին, թե օրինակ, երբ կբացվի դպրոցը, երբ կսկսեն վերաքննությունները և այլն: Ուստի կիսնդրերի, որ բարեհաճե՞իք երկտողով հայտնել ինձ, թե երբ հարկավոր է ինձ գտնվել իմ պաշտոնի զուրկ:

Հատկապես շնորհակալ կլինեմ, եթե Ձեր պատասխանը հաճեք հայտնել հեռագրով. ШУШИ, АЧАРЯНЦУ.

Իսկ եթե Ձեր պատասխանը օգոստոսի 20-ից կուշանա, կիսնդրեմ գրել այս հասցեով. Баку, Торговая ул. 15, Баласану АКОПЯНУ:

(հանձնել Աճառյանին)

Մնամ հարգանք՝ Հ. Աճառյան

4

<1916>

Հարգելի պր. Հ. Թումանյան,

Երբ ստորագրվեց Հայոց Համաձայնագիրը և պր. Հոֆը մեկնեց Հայաստան, ես էլ շատերի հետ մտածեցի, թե ահա եկել է խաղաղ աշխատանքի ժամանակը: Ես այն ժամանակ մտածեցի անցնել Վան, հաստատվել այնտեղ, իմ սեփական միջոցներով բանալ հայ լեզվաբանության բարձրագույն դասընթացներ, հավաքել ինձ մոտ մի քանի աշակերտ, աշխատել որքան իմ ուժերը կհեր են: Եթե հասարակությունը կամ նորակազմ կառավարությունը ինձ օգնական կհասնեք, տվելի լավ, իսկ եթե ոչ՝ միևնույն է, ես կաշխատեի իմ կարողության չափով: Այդ պիտի լինեք, եթե կարելի է ասել, առաջին հայագիտական համալսարանը:

Այսպիսի համեստ ծագում ունեցել է նաև Պարիզի Սորբոնը՝ որի աշակերտներից եմ նաև ես:

Իմ մտադրության մասին գրել էի նաև իմ ուսուցիչ, հայագետ Մեյլերին, որ սակայն խորհուրդ տվեց ինձ չշտապել և մի քիչ էլ սպասել, մինչև բարենորոգումների գործադրությունը:

Վրա հասավ պատերազմը և ամեն բան կերպարանափոխվեց:

Այժմ Ձեր նամակը դալիս է վերաբժարման իմ մասերը և նրանց դործադրության մի ուրիշ ճանապարհ ցույց տալու:

Հոգով համակրում եմ Ձեր գործին և ինձ ամբողջապես ղնում եմ Ձեր առամագրության տակ:

Ինչպես գրում եք, դասընթացը պիտի ունենա երեք բաժին.

Ա. Հայերեն լեզու,

Բ. Պատմություն (հայոց քաղաքական պատմություն, եկեղեցական պատմություն, քաղաքակրթության պատմություն, հնագիտություն, հնագրություն, աղագրություն, դրամագիտություն),

Գ. Հայոց գրականություն:

Այս երեքից միայն առաջին բաժնում կարող եմ ես օգտակար լինել: Առաջին բաժինը, ըստ իս, պետք է պարունակե հետևյալ առարկաները.

Ա. Լեզուներ.

1. Հունարեն	}	(երեք մեծ դասական լեզուներ)
2. Լատիներեն		
3. Սանսկրիտերեն		

4. Ֆրանսերեն	}	(երեք գիտական նոր լեզուներ)
5. Գերմաներեն		
6. Անգլերեն		

7. Զենդկերեն	}	(չորս իրանական մեծ լեզուներ)
8. Հին պարսկերեն		
9. Պաշտավերեն		
10. Նոր պարսկերեն		

11. Քրդերեն	}	(մեծ հարեան ազգերի լեզուները՝ որոնց ազդեցությունը մեծ է մեր հայերենի վրա)
12. Թուրքերեն		
13. Արաբերեն		

14. Հայ բենուսդի-տություն

Բ. Ընդհանուր լեզվաբանություն

15. Համեմատական լեզվաբանություն
16. Ձևաբանություն
17. Լեզվաբանության պատմությունը.

Գ. Հայ լեզվաբանություն

18. Հայերեն համեմատական քերականություն
19. Հայերեն լեզվի պատմությունը
20. Բարբառագիտություն
21. Հայ լեզվաբանության պատմություն:

Ուսումը կտևի երեկ առնվազն երկու տարի (Ֆրանսիայում երեք տարի է, անպատրաստների համար չորս տարի: Գերմանիայում ավելի): Բայց աշմտրիտ հայերենագետը պարտավոր է վերոհիշյալ բոլոր առարկաներից քիչ թե շատ ծանոթություն ունենալ: Եթե հարկ լինի, ես կարող եմ վերցնել հիշյալ առարկաներից մի ոտոշ թիվ: Կարելի է նաև 15 և 17 միացնել 18 և 21 համարների հետ, որով առարկաների թիվը կիջնե 19-ի. 14-րդը շատ կարճ ժամանակի է կարոտ. իսկ երեք նոր լեզուներից մի քանիսը կարող են արդեն աշակերտներին ծանոթ լինել, գիմնադիտավարտները դիտեն նաև լատիներեն, ինչպես և մեր թեմականի (Ն. Նախիջևանի) ընթացավարտները, որով առարկաների թիվը ավելի զեղչվելով կհասնի մոտավորապես 15-ի:

Ամեն կերպով և ամեն ձևի տակ ես պատրաստ եմ աշխատելու:

Գալով նյութականին, կարծեմ թե այս հարցը երկրորդական է, մի մարդ, որ իր ամբողջ ուշադրությունը տվել է այսպիսի մի սիրելի առարկայի, հագիվ թե դժվարություն ցույց տա: Ավելի շոշափելի խոսքերով խոսելով ասեմ, թե ես մինչև հիմա այստեղ ստացել եմ ուսուցչի սովորական ոռճիկը տարեկան 1600 ռուբլի: Եկող տարի լրանում է իմ ուսուցչության տասնամյակը նոր Նա-

խիջևանում, որով իրավունք կունենամ նոր հավելումի: Կաթողիկոսական նոր ծրագրով հավելումները ավելի են բարձրանում, ավելացվում է նաև գրավորների վարձատրությունը, որ մինչև հիմա չկար: Եվ եթե հաջողվի նաև մի քանի մասնավոր դասեր, իմ ամբողջ ստանալիք ոտճիկը կլինի ամսական 200 ուրբի: Իմ պահանջն էլ կլինի այսքան:

Պատասխանեցի Ձեր բոլոր հարցերին. մնում է միայն բառարանի կազմության դործը, որի համար ես ունեմ մի ուրիշ ծրագիր, բայց դա արդեն մտնում է Հայագիտական համալսարանի կամ ակադեմիայի գործունեության մեջ:

Հարգանքներով Ձերդ Հ. Անտոյան

5

7 օգոստոսի 1917,

Բաքու

Մեծաբո պր. Թումանյան,

Որովհետև երբ ուսումնական տարին սկսելու մոտ է, ուստի բարի եղբերանհապաղ հայտնելու երկտողով, թե ինչ եղավ Հայկական համալսարանի բացման խնդիրը:

Ես նախիջևանից մեկնելու ժամանակս ընդարձակ և ապահովյալ նամակ էի գրել Ձեզ՝ Թիֆլիսի հասցեով, բայց այժմ լսելով, որ հեռացել եք Թիֆլիսից, պարտք համարեցի այս երկտողով շիմել Ձեզ:

Առայժմ դնելով եմ Բաքվում. մեկնելու եմ օգոստոսի 23-ին, որովհետև նախիջևանի թեմական գաղտնիք բացվում է 25-ին:

Հարգանքով Հ. Անտոյան

Հասցես. Баку. Торговая, 15. Баласану Акопянцу:

Հանձնել Հ. Անտոյանին

6

20 օգոստոսի 1917,

Բաքու

Մեծաբո պր. Թումանյան,

Ուրախությամբ ստացա Ձեր նամակը: Որովհետև ընտրությունն աշնանն էլ լինելու, ես մտածեցի հետևյալ ձևը: Ամսի 23-ին կճանապարհվեմ նախիջևան, 25-ին կլինեմ պաշտոնատեղիս: Այժմ հրաժարվել, իմ կոշումից շատ տգեղ է: Երբ Թիֆլիսում ընտրությունը կկայանա և ենթադրենք կորոշեն ինձ կանչել, այն ժամանակ Հայկազյան Ընկերությունը կարող է պաշտոնապես դիմել ն. նախիջևանի թեմական դպրոցի հոգաբարձության և խնդրել, որ ինձ արձակեն: Ես սովանդում եմ ֆրանսերեն, հայոց պատմություն և Հայաստանի աշխարհագրություն: Առաջինի համար արդեն խոսել եմ մի դպրոցի հետ և հարկավոր դեպքում պատրաստ է իր թեկնածությունը դնելու, մյուս երկուսը կարող է մեր ուսուցիչներից մեկը վերցնել, որով դասերի կարգադրությունը առանձին դժվարություն չի հարուցանե և հոգաբարձությունը կարող կլինի Ձեր առաջարկած դեպքում արձակել ինձ:

Այսպես, ուրեմն, իմ մեկնելը որոշված է, տոմսակը արդեն առի և 23-ին առավոտյան ժամը 9½-ին կմեկնեմ № 7 գնացքով: Նամակագրություն դեպքում հասցես՝ նախիջևան, թեմական դպրոց:

Թեև Հայկազյան Ընկերության որոշումների մանրամասները չդիտեմ, բայց ցավալի է, որ համալսարանի բացումը հետաձգված է մի քանի տարով: Եթե ուզում եք նոր միայն ուսուցիչներ պատրաստել, նշանակում է պետք է արդեն մի քանի տարի սպասել և ամենից առաջ պետք է սպասել հաշտության, որովհետև այդ ուսուցիչները անշուշտ գնալու են Գերմանիա... իմ կարծիքով

համալսարանի այն երեք ֆակուլտետները, որոնց մասին նախապես որոշում կայացրել էիք արդեն, այժմ էլ կարելի էր բանալ: Դրա համար բավական ուսուցիչ կա, մանավանդ առաջին կուրսում 8 ուսուցիչ բավական չէ՞ երեք ֆակուլտետի համար, ինչ որ է, այս խնդիրների մասին կարելի է դեռ երկար խոսել: Իմ խնդրքը միայն այն է, որ, ինչ որ էլ լինի, իմ պարտավորությունները կտրուկ կերպով որոշված լինեն, որպեսզի վերջի վերջո, ավելորդ ձրիակեր չդառնամ: 24 տարի է, որ ուսուցիչ եմ, ուսուցչությունս 25-ամյակի նախօրյակին արած այս առաջարկությունները և առհասարակ Ձեր նամակների տոնյա մեծ պատիվ են ինձ: Երանի թե կարող լինեի սպասածի գոնե կեսի շափ օգտակար լինել:

Մնամ խոնարհ հարգանքով Ձ. Անաուրան

Հ. Գ. Զինվորական ծառայության մասին ես նախկին սաճկահայտակ եմ, 1902 թվին իբրև գաղթական ստիպվեցա ուսահայտակ գրվել, երբ 26 տարեկան էի: Օրենքը 25 տարեկանից վեր նոր գրված ուսահայտակներին ծառայությունից ազատում է և այս օրենքով ես էլ կազատվիմ՝ եթե պատշաճավոր դիմում տրվի կամ օրենքը փոփոխության ենթարկված չլինի: Մինչև այսօր աղաւտ եմ եղել իբրև թեմականի ուսուցիչ:

Նույն

7

24 նոյեմբերի 1917,
Նոր-Նախիջևան

Մեծարգո պարոն Թումանյան,

Տարուց ավելի է, ինչ մենք սկսել ենք մեր բանակցությունները ծանոթ խնդրի առթիվ: Վստահելով Հայկ. Ընկ.-թյան մի քանի վճռական դրույթունների վրա, ես տեսել եմ իմ պատրաստությունները այստեղից հեռանալու: Ես թողել եմ իմ բնակարանը, ծախել կարասիներս, կապուտել գրքերս և մասամբ Բաքու ուղարկել, մասամբ զրել ամբարները: Ինձ ու ես ու կինս անցանք Բաքու և հուլիս ունեինք այնտեղից անցնելու Թիֆլիս: Ձեր վերջին նամակը ստացա օգոստոսի կեսին. դա մի սլոնակիսի վճռական տոնով գրված թուղթ էր, որ քիչ էր մնում ես բոլորովին հրաժարվեի պաշտոնից և ուղղակի նախիջևան լի չգնայի: Սակայն բարոյական պարտք համարեցի չանել այդ քայլը և խոնդրեցի, որ Հայկ. Ընկ.-ը դիմելով հոգաբարձության՝ առաջարկեր արձակել ինձ: Վերադառնալով Նախիջևան՝ ես այս բոլոր հանգամանքները պարզեցի հոգաբարձության առաջ. նրանք համաձայնեցին արձակել ինձ՝ ասելով, որ իրենք պատրաստ են զոհողություն անել՝ եթե ավելի բարձր մի հաստատություն կրպահանքի այդ Գտան նույնպես մի ուսուցիչ, որ պիտի փոխանակեր ինձ, դա էր Journal der Balkans թերթի խմբագիրներից այր. Նավասարդյան: Ամեն բան ուրեմն կարգին էր և սպասում էինք Ձեր կարգադրության: Դուր ասում էիք, թե ինձ կկանչեն աշնան և այդպես էլ հավատացած էինք բոլորս: Սակայն աշունը վերջացավ և դեռ ոչինչ չկա: Զգիտեմ թե ինչ որոշում պիտի կայանա վերջապես: Մտածելով թե աշնան պետք է կանչվեմ, ես կնոջս թողել եմ Բաքու և այժմ այստեղ մենակ, առանց հաստատուն բնակարանի, պանդուխտի պես թափառում եմ այս ու այն խղճուկ սենյակում: Զեմ պատրաստել ձմեռային պաշարս և այժմ տոմսում եմ մի քանի անգամ ավելի թանկ (ալյուրը, յուղը, ապուխտ և այլն): Գրքերս կապուտած լինելով՝ գրեթե զրկված եմ գրական աշխատանքից: Մինչև անգամ հետո չեմ վերցրել ձմեռային հագուստս և այսօր, երբ արդեն ոտք ենք կոխում ձմռան շեմքը, ես դեռ չգիտեմ թե մնալու եմ այստեղ՝ թե չէ: Բայց թողնենք այս բոլոր նյութական վնասները, որոնք այլևս անդառնալի են: Կան նաև մի քանի այլ հանգամանքներ: Պր. Նավասարդյանը ուրիշ տեղ պաշտոն է գտել և ուղում է հեռանալ այստեղից. ուստի ու-

դում եմ անմիջապէս և վերջնականապէս իմանալ, թե երբ կարող եմ թողնել Նախիջևանը: Մեր դպրոցում տեսուչ շունենալով՝ նշանակվեց մի պաշտոնակատար, այժմ ուղում են մի օգնական ընտրել նրան և ես կարող էի քվեարկել, եթե իմ վիճակն որոշված լիներ: Դուստովի համալսարանում հարց է ծագում հայագիտութուն մտցնելու: Իմ թեկնածութունը դնե՞մ, թե չէ: Ահա կան այսպիսի խնդիրներ, որոնք պահանջում են անմիջական վճիռ: Ուստի խընդրում եմ, այս նամակս ստանալու պէս, ապահովյալ գրությամբ հայտնել ինձ Ձեր վերջնական որոշումը:

Ես շատ և շատ տուժեցի՝ անխոհեմությամբ հավատալով Հայկ. բնկ-թյան միադաժամ հայտարարություններին և ցանկալի չէ որ այսուհետև ես և ավելի դառնապէս տուժեմ:

Խոնարհ հարդանոք Հ. Աճառյան

Նոր-Նախիջևան
թեմական դպրոց

8

11 դեկտ.

Մեծարգո պր. Թումանյան,

Չախորժելով բնավ լրագրական վիճաբանություններից՝ իմ պատասխանը ուղղակի Ձեզ եմ գրում:

Երկու տարբեր լեզվի բառեր իրար հետ համեմատելու ժամանակ, առաջին նկատելու բան է ձայնական այն թիվը և երկրորդը՝ նշանակութուն նմանությունը: Այս երկուսը այն անհրաժեշտ պայմաններն են, առանց որոնց համեմատությունը անհիմն է: Հասարակ անունները համեմատելու ժամանակ երկու պայմաններն էլ կան. հյ. մայր և պոս. ма́йаг կարող են համեմատվել իրար հետ, որովհետև թե՛ ձայնական նույնությունը կա և թե՛ նշանակության նույնությունը. եթե այդ երկու բառերը ձայներով նման, բայց նշանակությամբ տարբեր լինեին, բնական է, թե այլևս համեմատությունը չեղյալ կհամարվեր: Ուրիշ խոսքով հասարակ անունների համեմատության մեջ կա միշտ մի տեսակ կոնտրոլ, որը մեզ ապահովում է սայթաքումներից:

Հատուկ անունները այդպէս չեն, այստեղ կա միայն ձայնական նմանությունը, նշանակութունն անհայտ է, հետևաբար դրկված ենք կոնտրոլից: Եթե մարդ միայն ձայնական նմանությունը առնե՝ մի որևէ հատուկ անուն ուսումնասիրելիս՝ կարծեմ ավելորդ է ասել իր մի քանի տասնյակ ստուգաբանությունն կարող է գտնել: Օրինակի համար ասենք հայ բառը. սկսենք ստուգաբանել զանազան լեզուներով. հայերենով կարելի է մեկնել իբր հայնի տրամատեն՝ նայող, վերակացու, տեսուչ (իբր թե նվաճված ժողովուրդների վրա հսկող). կա նաև հայ «աղբ, ապականություն» (Փիլոնի մեջ եմ գտել այս անպիտան բառը և ոչ մի բառարանում չկա), անգլերենով հայ կնշանակի բառը՝ «բաճը» և կարելի է ասել, թե հայը կոչեց իրեն այսպէս՝ իբրև մյուս հարևան ժողովուրդներից ավելի բարձր. արաբերեն հայ կնշանակե կենդանի, ողջ, իբր թե մյուս ազգերը մեռնող և ոչինչ բաներ լինեին, և այլն և այլն: Բայց այս բոլորը սուտ և երևակայական բաներ են, որովհետև հաստատուն հիմք չունեն: Այս պատճառով է ահա որ լեզվաբանները առհասարակ խուսափում են հատուկ անունների ստուգաբանության մեջ մտնելուց:

Լեզվաբանության պայմաններից մեկն էլ այն է, որ համեմատելի բառերի արդի նմանությունից չխաբվենք: Եթե բառերը իրար հետ ցեղակցութուն ունեն, պետք է որ քանի հինը գնանք, այնքան ավելի մոտենան միմյանց: Սրանից հետևում է այն, որ անհրաժեշտաբար պետք է գտնել յուրաքանչյուր բառի հնագույն ձևը և այդ հնագույն ձևերը միայն համեմատել իրար հետ. եթե կա նմանություն, շատ լավ. կարելի է օգտագործել, իսկ եթե ոչ՝ այլևս նա կորած է մեզ համար: Շատ անգամ պատահում է, որ այսօր ձայնապէս իրար շատ

նման բառեր հնասյես իրարից բոլորովին տարբեր լինեին. օրինակ՝ պրս. *bed* և անգլ. *bed* հավասարապես նշանակում են վատ. բայց եթե փնտրենք հինը՝ կտեսնենք, որ պարսիկը կդառնա *vata* և հենց սրանով էլ հեռացավ անգլերենից:

Առնենք այժմ Մասիսը. այս բառը այսօր է ալսպես արտասանվում. սրա հինը Մասիֆ է, որի հայցականն ձևն է Մասիս. ասել են Մասիֆ՝ կրկին լեռների պատճառով. սեռ. Մասեաց, ուղ. եղ. ձևն է ուրեմն Մասի, արմատը դարձավ ուրեմն Մաս. այժմ կարելի՞ է այլևս համեմատել այս բառը հնդ. սիս ձևի հետ. *Իեռես այս հնդ. ձևի ծայրը չեմ փնտրում, որովհետև իմ միջոցներով չկարողացա իմանալ, թե ինչ տեսակ սիս է, հնդ. կա մի քանի տեսակ *u* (*s*, *c* և *s*), որոնք տարբեր-տարբեր ծագում ունեն, դրանցից մեկը առաջանում է *k* ձայնից, մի ուրիշը հայերենի մեջ ջնջվում է և այլն: Եթե ուրեմն հնդկերենի էլ ծայրը գտնենք և հանկարծ դուրս գա, որ այդ սիսն էլ ծագում է *kig* ձևից, այլևս ոչ մի տառ չմնաց հայերեն և հնդկերեն բառերի միջև համեմատության:

Առնենք Արաքսը, որ համարում եք թրք. Արազ «գիծ» բառից: Բայց Արաքս բառի հին ձևը մի՞թե արազ է: Այս բառը շատ հին ժամանակից <...>*

ИЗ ПИСЕМ РАЧЬИ АЧАРЯНА

В. Г. ВАРДАНЯН

(Резюме)

В письмах Рачьи Ачаряна филологу и педагогу Ерванду Шахазизу и Ованесу Туманяну отразились эпизоды жизни и деятельности выдающегося языковеда, его неустроенность, вызванная неблагоприятными условиями времени. Письма хранятся в Музее литературы и искусства им. Чарепца (ф. Е. Шахазиза, отд. III, № 41—43; ф. О. Туманяна, № 491—495).

* Նամակի վերջավորությունը չկա: